Մասեցաստանի Եղբայր

ՄԻԵՆԱՏԻ

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼԻՍԻԳԵՐՑԵՑ ՎԷ ՄԷՎԱՏՏԸ ՅԱՑԻՐԷ

ՍԷՓԻՋԻՆՃԻ ՍԷՆԷ ՀԱ. ՃԷՄԱԶԻԼ ԱԽԸՐ ՀԴ 1873 ՕԳՈՍՏՈՍ 7 ՇԱԼԸ ՀԱՆԳԻՍԱՆԿԻ ՕԳՈՍՏՈՍ 19 ԹԻՎ 2278

Ամենաշքեղ ապրանքներ ամենաէժան գներով։ Ամենամեծ ընտրություն։ Ամենամեծ զեղչեր։ Ամենամեծ գովազդ։ Ամենամեծ հաճախորդներ։ Ամենամեծ հաջողություն։ Ամենամեծ գոհունակություն։ Ամենամեծ գոհունակություն։ Ամենամեծ գոհունակ

ՍԿԶԲԱՅԻՆ

Կէչէն ճիւմա կիւնիւ թէճէմմիւ իտէն ընդհանուր ժողովա, Սրբազան Պատրիարք հազրէթլէրինին օգուտուգլարը պիր լայիհանքն զաղէթամբզոտաէրինի չօգլար արզու վէ թալապ իլլէմիշ օլտուգլարընան այնէն տէրճինէ միւսարաաթ իտէրիզ։

Երեսփոխանք Հայոց։

Այսօր իմ արձակման օրն է. կաղաչեմ՝, որ թո՛յլ տաք այս տաճարին մէջ Հայոց երեսփոխանութեան առջև, մի քանի խօսք խօսիմ՝, և արձակումինդրեմ այս առենէն, որ 1869 Թուոյն սեպտ. էին իւր քուէի ապատ ընտրութեամբ զիս կապեց և Տարօնէն վարեց մինչև ցայս վայր։ Նոյն տարւոյ նոյ. ամսոյ սկիզբը, Պոլսոյ Մայր եկեղեցւոյ բեմին վրայ, մեր գահակալութեան հանդէսն կատարուեցաւ։ Զգիտեմ՝ կը յիշէ՞ք, այն իմ Ծաղկազարդի օրը, ես խօսք տուի ձեզ և ուխտեցի այսպէս. Երեսփոխա՛նք և ժողովո՛ւրդք Հայոց, դուք զիս բազում դժուարութեամբ յայս գահ բարձրացուցիք, կուխտեմ ահա՝ յանդիման Ձեր, որ առանց աշխատութեան ես ինքնին կիջնամ՝ այս գահէն, յարգանօք համբուրելով համայն Ազգի կնիքը կրող Ձեր վճռագիրը, զի օրինօք կապեցայ, կը փափաքիմ դարձեալ օրինօք արձակիլ։ Միայն սա կաղաչեմ, վասն փառաց Եկեղեցւոյ և Հայոց ազգին, խաղաղութեամբ կոչեցիք զիս, խաղաղութեամբ թողէք զիս երթամ։

Այո՛, մեծ ակնկալութեամբ ընտրեցիք զիս ու բերիք. գիտեմ, դժուարին է դիւրութեամբ թողուլ։ Ի՞նչ էր արդեօք Ձեր և հանուր Թուրքիոյ Հայոց ակնկալութիւնը։ Ահաւասիկ։ կակընկալէիք որ Խրիմեան Հայաստանեայց եկեղեցւոյ փառք կը յաւելուր. կը յուսայիք թէ նա եկեղեցւոյ պաշտօնէից աղաւաղ դրութիւնը կը վերանորոգէր. կը հաւատայիք որ նա անդադար քարոզելով դպրոց, դաստիարակութիւն, լոյս և այն, Ազգային յառաջդիմութեան կառք կը վարէր և դէպ 'ի իւր նպատակ կը տանէր, թո՛ղ այս. մեծ ակնկալութիւն մի ևս այն էր, թէ Խրիմեան իբրև Սահմանադրասէր Պատրիարք նա ինքն ձեռնհաս պիտի լինի, շուտ և արագապէս իւր արժուի թեւերով Սահմանադրութիւն բառնալ ու տանիլ սփռել Հայոց աշխարհին վրայ, քաղաքացին և շինական, գիտուն և ռամիկ առ հասարակ միահամուռ մկրտել լուսաւորել և նոր սահմանադրական ժողովուրդ կազմել։ Առաւել քան զայսոսիկ, ամենամեծ ակնկալութիւն գաւառացի ժողովրդոց այն էր, թէ Խրիմեան Պատրիարք եղաւ, ուրեմն, աւեա՛ւ, պէտք է որ ազատունք հարստահարութեան ամենն ճնշումներէ։ Զարմանքն այս է, որ ես ել ճիշդ ձեզ նման կը հաւատայի թէ կարողեմ այդ մեծամեծ հրաշքները գործել և արդիւնաւորութեամբ պսակել այդ նախաթուեալ մեծամեծ ակնկալութիւնք։ Որա համար իմ սրտի զեղուն զգացմամբ և անկշիռ երևակայութեամբ չափեցի, թէ արդեօ՞ք Տարօն թողում, վարագ թողում, իմ այն փոքրիկ ագարակները, յորս կոչնատէի և կը մխիթարուէի գոնէ դուզնաքեայ վաստակօք, ու երթամ մեծն Բուզանդիոն Հայոց Պատրիարք լինել։ Անկեղծաբար խոստովանելով՝ ես կը ճանաչէի զիս, թէ Պատրիարքութեան բարձր Աթոռին վայելուչ յատկութիւններ չունէի, ոչ իմաստութեամբ, ոչ ուսումնականութեան հանճարով, ոչ քաղաքացիութեամբ և ոչ քանի մի լեզուաց հմտութեամբ, Այսչափ տկարութեամբ հանդերձ, քա՛ւ թէ փառասիրութեան տենչանք մղեց զիս յայս պաշտօն, ոչ, այլ միայն Ազգին սէր և Հայրենեաց օգնելու եռանդն։ Ինքնին այս միայն կը մտաբերէի, թէ պահ մը երթամ Պատրիարքութեան գահին վրայ կենամ, թերևս այդ իշխանութեան կեդրոնէն ձեռնհաս լինիմ դարման մի գտնել ու հայթայթել բազմակարօտ Ազգին։ Իմ այս ապիկարութեանս չափը նոյն իսկ երեսփոխանական ժողովդ քաջ իսկ գիտէր, Խրիմեան իւր աչքէն անծանօթ չէր, բայց չգիտեմ թէ ի՞նչ նպատակաւ, գուցէ խաղաղութեան համար, պահ մի ափշեցաւ ու մոռացաւ Սահմանադրութեան օրինադրած անժխտելի յատկութիւնները, և ընտրեց մարդ մի, որուն կեանքը առաւել կը սիրէր լեռ, դաշտ և վանական զբաղմունք։ Բայց ասկէ աւելի ի՞նչ պիտի ընէիր, երեսփոխանութիւն Հայոց, նախահոգատեսութեամբ չցանեցիր, որպէս զի ժամանակին հնցէիր առանց շուարման, վանայ փոքրիկ ագարակի մի մէջ ինքնաբոյս խրիմեան գաւառ, վա՛յ, ասիր ու ընտրեցիր. այդ ինքնաբոյս ծառերուն պտուղ այսչափ է. իրաւունք չունիս տրտունջ բառնալ։

Երեսփոխանութիւնն զիս անտես կարգեց. անշուշտ իւր իրաւունքն է համար պահանջել, տակաւին պամանաժամ կար, բայց ես կանխեցի իմ համարս տալ, մտածելով՝ որ երթէ թողում այլ ևս ժամանակ անցնի, առաւել ևս պիտի ծանրանան յիմ վրայ համոզատութեան պարտիք։ Մինչև նոյեմբեր ամսոյ սկիզբը, մեր ընտրութեան չորրորդ տարին կը լրանայ, և ես կամաչեմ, թէ այս շրջանին մէջ՝ ո՞ր գործեր յառաջ բերեմ ու թուեմ՝, որ ինձ և սահմանադիր վարչութեան գոնէ փոքր 'ի շատէ պարծանք լինին և ազգը յոյսերով ոգևորի։

Վաթսուն երեքերորդ անգամ երեսփոխանական ժողովոյդ նախագահեցի. 'ի սկզբան՝ երբ առաջին նիստն կազմեցաւ, առեան բացուեցաւ, ինչ էր նախագաս և կարևոր խնդիրն— ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ։

Ո՛հ, չորս տարուան շրջանի մէջ, այս ամենակարևոր խնդիրը խնդրոյ կարգին մէջ անլուծանելի մնաց. յանձնաժողովի նախապատրաստեալ ծրագիրը մերժուեցաւ, որպէս զի լաւագոյն ևս ծրագրուէր։ Քանի մի ամիս յառաջ նոր վերաքննիչ յանձնաժողով մի ևս ընտրեց երեսփոխանութիւնն, այդ ժողովը, ինչպէս որ կը լսեմ, դեռ և ոչ յօդուած մի վերաքննեց։ Այս խնդիրն այսպէս անկատար կայ ու կը մնայ։ Երեսփոխանութիւնն այլ ևս ի՞նչ խնդիր լուծեց, Սոյ խնդիրն լուծեց, այո՛, այս խնդիրը լուծեց մեծ հեռատեսութեամբ։ Հարստահարութեան խնդի՞րն յուզեց, այո՛ այս խնդիրն մահու և կենաց խնդիր էր առաջադրել ազգի մի համար, զոր երկիցս Բ. Դրան յանձնելով չնորհ և գթութիւն հայցեցինք յանուն ազգին։ Եւ դեռ կսպասեմ այցելութեան։ Կանուրիշ քանի մի ընդհանուր ժողովոյ առեան եղած խնդիրներ, զոր օրինակ, առենական կանոնագրութեան խնդիր, կեդրոնացման և ապակեդրոնացման խնդիր, կաթուղիկոսական և պատրիարքական յարաբերութեանց խնդիր՝ վեհափառ կաթուղիկոսի կոնդակի խնդիր, Ազգամարտ կաթուղիկոսութեան խնդիր։ Սոյն խնդիրներէն թէ ո՞րն կարևոր էր, և ո՞րն անկարևոր, ո՞րն լուծուեցաւ և ո՞րն անլոյծ մնաց, ձեզ կը թողում իմաստասիրել, թէ արդեօք չահեցա՞ւ, թէ 'ի զուր վատնեցաւ երեսփոխանական առեան։ Թողլով երեսփոխանական ժողովին գործոց արդիւնքը, պէտք է հարևանցի կերպով նկատենք չորս տարուան շրջանի մէջ գանուած քաղաքական ժողովոց, տեսուչ խորհրդոց, կրօնական ժողովոյ, հոգաբարձութեանց, մէկ խօսքով համայն ազգային վարչութեանց գործքերը և որոշումները։ Դիւանական վիճակագրութենէն կրնաք տեղեկանալ, թէ այդ խնդիրները և գործքերը ամենամեծ մասամբ անհատական և մասնաւոր են։ Այսպիսի անթիւ անհատական խնդիրներով միշտ զբաղեցաւ ազգային վարչութիւնն իւր ամեն ճիւղերով բաց յ'ընդհանուր ժողովէն։

Այսչափով գոհ եղաւ և երբէք չը խելամտեց՝ թէ սահմանադիր օրինաց առաջ իւր մեծ պարտիքն էր նկատել ազգին կեանքը, ազգին վիճակը, ընդհանուր խնդիրներ յառաջ բերել, այն խնդիրներու համար է խօսքս, որ ազգին կեանքը վերանորոգել կ'երաշխաւորէին։ Ստոյգ խօսելով ես ընդ աչս դառնալ չեմ ուզեր, և չեմ կրնար մեղադրել կրօնական և քաղ. ժողովները թէ ազգին ընդհ. խնդրոց համար, նոքա ևս ինձի պէս չեն խորհիր և չեն մտաբերեր։ Այո՛ թէրևս առաւել քան զիս կզգան ու կը խորհին ազգին պէտքերը։ Բայց ե՞րբ, ո՞ր ժամանակին մէջ ձեռնհաս են խորհելու, այդ ժամանակը լիա համար անծանօթ է, զի խուռն և բազմադիմի մասնական խնդիրներ յոփչտակեր են զանի։ Դիւանի՞ վրայ խառնած թուղթերը, խորհրդարանի դրան վրայ կեցած ճնշող ժողովուրդը, քեզ ե՞րբ ժամանակ կուտան որ գոնէ օր մի, պահ մի, ազգին ընդհանուր և ներքին խնդրոց վրայ խորհիս։ Ինչպէս են,

Ա. Ազգային վարչութիւնդ իրապէս կեդրոնական և հանրային դրութեան վերածել, և կ. Պոլսոյ համար առանձին տեղական վարչութիւն կազմել։

Բ. Ազգային պաշտօնէութեան՝ բարեխնամ կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնն օգտակար դրութեան և աւելի օրինաւորութեան վերածել։

Գ. Սահմանադրութեան ընտրողական օգտակար սկզբունքը չարաչար չը գործածուելու համար, ապահով և կարևոր եղանակ որոշել,

Դ. Ազգ. տուրքը կանոնաւորել և ընդհանրացնել

Ե. Ազգ. պաշտօնէութեան համարառութիւնն և համարառութիւնն պարտաւորիչ եղանակի մէջ դնել։

Զ. Եկեղեցական ներկայ յանկերպարան փճակն և ընթացքը կերպաւորել և կանոնաւորել՝ հոմանձայն Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ նախնի ոգւոյն օրինաց և ուղղութեան։

Է. Առաջնորդական պաշտօնավարութեանն և համարառութեանն օրինաւոր անխուսափելի եղանակ սահմանել։

Ը. Ազգ. վանքերէից և եկեղեցեաց կալուածներն ու եկամուտներն ապահովել՝ ազգի բարոյական օգտին ծառայեցնել։

Թ. Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւնն հաստատուն պահելու և Քրիստոնէական ճշմարիտ գիտութեան լոյսը ազգին մէջ ծաւալելու համար ամէն կարևոր միջոցներ ձեռք առնուլ, և ջանալ ազգին մէջ պատահած կրօնափոխութեան առաջքն առնուլ։

Ժ. Ազգին մէջ ուսումն և գիտութիւն ծաւալելու համար նոր և ազգու միջոցներ ձեռք առնուլ։

ԺԱ. Ազգ. դաստիարակութեան համար դրամագլուխ հաստատել։

ԺԲ. Նախակրթական ուսումն ընդհանրացնելու դիւրութիւններ գտնել, և քանի մի կեդրոնական բարձրագոյն ուսումնարաններ բառնալ։

ԺԳ. Հայոց Ազգ. ընտանեկան կեանքն, այն է ամուսնական և բարոյական կապերը ամրապնդել, զեղծումներն բառնալ, պանդխտութեան առաջքն առնուլ, և ազգը մի հանրական ընտանիք կազմելու դրութեան վերածել։ Ներքին և արտաքին հարբստահարութիւններն բառնալու համարբարեխնամ տէրութենէն աւելի զօրաւոր միջոցներ խնդրել, գաղթականութիւնն արգելուլ, Ազգ. անհատական իրաւունքներն պաշտպանել որով և ազգի ամբողջութիւնն ապահովել։

Վարչական ընթացից նկատմամբ սոյն համառօտ դիտողութիւններս յայտնելէն յետոյ՝ գիտեմ անհամբեր կը սպասէ երեսփոխանական ժողովդ, որպէս զի փութամ յայտնել այն կարևոր պատճառներս, որք անհրաժեշտ կերպով ստիպեցին զիս ինքնակամ յօժարութեամբ հրաժարիլ։ Հեռատեսութեամբ նկատելով որ Ազգին շահ, եկեղեցւոյ շահ, ժամանակի ծանր ծանր պարագաներ, այսպիսի զոհ մի կը պահանջեն յինէն, Սահակ նահապետին չափ պատրաստ եմ առ այս, միայն կ'աղաչեմ՝ որ երեսփոխանական ժողովդ վճիռը պատրաստէ։

Իմ հրաժարելուս առաջին պատճառը ձանձրութիւն և յուսահատութիւնն է, գործելու համար եկայ, և բան մը չի գործեցի, մէկ երկու տարի իբրև անփորձ հազիւ թէ փոքր 'ի շատէ խելամուտ եղայ ազգային գործոց և ընթացից։ Ամսթ չեմ համարիր այսպէս խոստովանիլ, վասն զի Եւրոպիոյ ամենէն իմաստուն կարծուած անձն իսկ առաւելն կարօտ է փորձառութեան և գործակից աջակցութեան։ Սոյն փորձառութեանս մէջ ստուգապէս վերահասու եղայ, և կը վկայեմ առաջի ազգին և երեսփոխանութեանդ որ Սահմանադրութեան տրամադրած քանի մի ժողովներն երբէք բաւական չեն Հայոց ազգի պէտքերը հոգալ։

Մի կրօնական ժողով ունիմք որուն պարտիքն էր, ըստ եկեղեցւոյ օրինաց և Սահմանադրութեան՝ եկեղեցին բարեզարդել, արժանաւոր եկեղեցականաց դասը բազմապատկել, բարեպաշտութիւն և կրօնի զգացումն ժողովրդոց սրտի մէջ կենդանի պահել։ Այս պարտքերը կատարելու յաջողեցա՞ւ արդեօք, եթէ հարցնէք, պիտի պատասխանէ ո՛չ, վասն զի ժամանակ չունեցաւ, թող թէ գաւառական եկեղեցեաց համար հոգալ, և բարեկարգութեան օրէնքներ տալ, նոյն իսկ Մայրաքաղաքիս երեսուն երկու եկեղեցեաց և այսքան քահանայից պէտք եղած բարեկարգութիւններն հաստատելու անձեռնհաս եղած է միշտ. և այս դրութեամբ երթալով ոչ մի ժամանակ ձեռնհաս պիտի ըլլայ։

Սահմանադրութիւն մի անվարձ և անթոյլատրելի քաղաքական ժողովի մը տուած է ազգին համար, որոյ պարտիքն է Թուրքիոյ երեք միլիոնի մօտ ժողովրդոյ պէտքերն հոգալ, շաբաթն մի անգամ խորհուրդ կազմելով և այն հազիւ երեք ժամու տևողութեամբ։

Մեր քաղ. ժողովոյ վիճակն տնձամբ և ներկայութեամբ նկատեցի տեսայ որ այս ժողովը միշտ անձեռնհաս եղած է նոյն իսկ դատական և այլ մասնաւոր խնդիրները լուծել, թող թէ Ազգին ընդհանուր ներքին և կենսական խնդիրները յառաջ բերել և խորհիլ։ Կաղջեմ, ծանրաբեռնած է այդ ժողովը, վերուցէք իւր թիկանց վրայէն բոլոր գաւառական խնդիրները, տեսցուք, թէ դա կարո՞ղ է նոյն իսկ Մայրաքաղաքիս թաղային գործերը կարգադրել և ահա այդ գործերուն երեսէն է, որ երէկ Հայոց Պատրիարքարանը կուսոյ ասպարէզ դարձաւ ի լաւ ամէն ողջամիտ ազգասիրաց։ Այսպէս է նաև միւս Տեսուչ խորհրդոց վիճակն, որոց գործելու ասպարէզ միայն մայրաքաղաքիս շրջանակն եղած է և միթէ ի Պրուսա և ի Ռօտոսթօ երթալու ժամանակուն։

Գիտէ երեսփոխանութիւնդ, որ Սահմանադրութիւնը աշխատութեանց բաժանման սկզբունքն ընդունած է, ուսաի, վարչական ընթացից գոնէ ըստ մասի։ դիւրութիւն մի տալու համար, ասկէ իբր տարի մի յառաջ այս դէպուարին իրաց պարագայները մի առ մի համոզական բանիւ ու արդարացի բաստերով քաղ. ժողովոյ առենին ներկայացուցի, խնդրելով, որ երկու Մասնաժողովներ յատկանան։ «Ժողով մի տեղական գործոց, ժողով մի գաւառական գործոց»։ Մեր այս պարզ և օրինաւոր խնդիրն այնքան թիւր կարծիքներու ենթակայ եղաւ քաղ. ժողովին առաջ որ աւելորդ, և անկարեւոր դատեց զայն ուշադրութեան առնուլ, և ես խոհականութիւն համարեցի չպնդել, մինչև ժամանակ անցնի և փորձառութիւնն զիրենք համոզէ։ Այն օրէն և այս խնդրէն ծնաւ անհամաձայնութիւն մեր և քաղաքական ժողովին մէջ։

Զարմանալ պէտք է թէ այս ամենապարզ խնդրէն կարելի՞ է յոռի նպատակ մի հանել և մինչև իսկ ասել թէ հակասահմանադրական է այս դրութիւն և այլն։ Երբ տեսայ, որ քաղաքական ժողովն, այս խնդրոյն շուքէն միշտ կը խրտչի, այլ ևս անկարելի է ընդունել տալ՝ խորհեցայ հիմնական կերպով այդ խնդրոյն լուծումն Ընդհանուր ժողովին բերել վերաքննիչ յանձնաժողովին ձեռօք։

Ուստի, իբր երկու ամիս յառաջ, երբ ինքն պաշտօնական գրով մեր դիտողութիւնն խնդրեր էր Սահմանադրութեան յօդուածոց մասին, յայնժամ պատեհ առիթ համարելով՝ սոյն այս ամենակարևոր խնդրին, իբրև առաջին դիտողութիւն, գրեցի և տնձամբ մատուցի յանձնաժողովին, և շատ համոզիչ փաստերով խօսեցայ, բացատրեցի խնդրոյ բուն ոգին և օգուտ, որ թէ մանուկ լսէր, կը համոզուէր։ Բայց ցաւօք սրտի կը յայտնեմ յատենի ազգային ժողովոյս, թէ ինչպէս քաղաքական ժողովը նոյնպէս և վերաքննիչ յանձնաժողովը նուազ կարևորութիւն տալով մեր խնդրոյն զայն մասնաւոր տեղեկագրով ընդհանուր ժողովոյս բերել հարկ չէ համարած, թողլով որ Սահմանադրութիւնն ամբողջ վերաքննուելէն յետոյ ընդհանուր ժողովին գայ։ Աստ ահա՛ իմ համբերութիւնս հատաւ. զի ես չգիտեմ ու չեմ հաւատար թէ այդ վերաքննութեան աւարտում ո՞ր թուականին է։ Այս խնդրոյն ոգին լաւ ըմբռնելու համար պէտք է կարդամ յանձնաժողովին տուած առաջարկութեան ճիշդ պատճէնը և ապա դառնամ ու բացատրեմ երկրորդ պատճառը, որ մեր հրաժարման փոքր առիթ չէ։

Վսեմաշուք Ատենապետ

Ազգ. Սահմանադրութեան վերաքննիչ յանձնաժողովոյ

Քանի մի օր յառաջ յայտագիր մի ընդունեցի վերաքննիչ յանձնաժողովոյդ ատենէն, որով մեր կարծիքն ու դիտողութիւնները կը խնդրէք Սահմանադրութեան մէջ պարունակեալ վերաքննելի յօդուածոց վրայ։

Առ այս ինչպէս բերանացի Ձեր Ատենին խօսեցայ. առ այժմ միայն խիստ հակիրճ բանիւք առաջին դիտողութիւնս կը յայտնեմ։

Ազգային վարչական կազմութիւնը (բաց ի յ'Ընդհանուր ժողովէն) միշտ անբաւական և անձեռնհաս է համայն Թուրքիոյ Հայոց ազգին խնդիրներն բաւ օրինի և ընթացիկ եղանակաւ լուծելու. թէ՛ օրուան պատահական խնդիրները, թէ՛ ներքին և կենսական գործերը, որք անհատական մասնաւոր անձի մը կամ առանձին գաւառի մը չեն վերաբերիր, այլ բովանդակ Ազգին։ Զի ազգին շահ և յառաջադիմութիւն այս խնդրոյ մէջն է։ Այս խնդիրները իսպառ բարձի թողի եղած են, միայն բերանով կը խօսուին, լրագիրք կը քարոզեն, բայց առանձ արդեանց և առանց ձեռնարկութեան մընացած են մինչև ցայսօր, և սորա բուն ներքին պատճառն է վարչական ժողովոյ սակաւութիւնը և ժամանակի անձկութեան պայմանը։

Ազգ. Սահմանադրութիւնն Թուրքիոյ հայոց իւր առանին խնդիրները լուծելու համար միայն մի քաղաքական ժողով, մի կրօն. ժողով և իրենց քանի մը մասնաւոր ճիւղերը հաստատած է։ Այս ժողովները շաբաթը միայն երեք կամ հազիւ կարող են ժողովիլ ժամ ութին և շատ անգամ անցած՝ ատեանը բանալ, խնդրոյ կարգը յառաջ բերել և լուծելը եթէ կայ կէտ մի, որ Սահմանադրութեան խմբագիր ժողովոյ մտքէն վրիպած է, ահա այս կէտն է. ինձ այնպէս կը թուի որ այդ օրէնքը խմբագրող ժողովը թերևս նկատելով որ Սահմանադրութենէն՝ յառաջ միայն գերագոյն և հոգևորական երկու ժողովները կարող եղեր են ազգը կառավարել, և նորա խնդիրները լուծել, ուստի Գերագոյն ժողովին տեղը՝ քաղ. ժողով, և Հոգևորականին տեղ՝ կրօնական ժողովը բաւական և շատ համարեր են։

Արդեօք չեն մտածեր և չեն կրցեր նախատեսել, եթէ Սահմանադրութենէն առաջ Հայոց համար տարեկան հազար խնդիր կար, Սահմանադրութենէն յետոյ երկու հազարի հասաւ, զի խիստ բնական է, երբ ժողովուրդը քուէի իրաւունք ստանայ, երբ ազգին մէջ պարտուց և իրաւանց սկզբունքն օր ըստ օրէ յարգուի, անշուշտ բազմապատիկ խնդիրներ կը ծնանին, և այս խնդիրներէն շատ անգամ վէճ և կռիւ, որու հետևանքն եղած է միշտ չարաշար զբաղմունք վարչական ժողովոց։ Թող այս, ոչ միայն Սահմանադրութիւնը Հայոց խնդիրներուն թիւն տասն երկու տարուան մէջոց բազմապատիկ առաւելցուց, այլ և ժամանակն յառաջադիմութիւն, ամէն օր, ամէն ժամ և նոյն իսկ վայրկեաններուն մէջ խնդիրներ կը ծնին։ Այս ոչ միայն մարդը՝ այլ Աւետարանին վկայութիւնը կը ստուգէ թէ՝ վաղեան օր իրեն համար խնդիր ունի, «ոչ գիտես թէ վաղուն զի՞նչ ծնանելոց է»։ Սահմանադրութիւն գծողները ասկից դուրս ուրիշ վրիպակ մը ևս ունին, մասնաւոր խնդիրները ընդհանուր խնդրոց հետ չփոթեր են, զոր օրինակ՝ բուն Մայրաքաղաքիս տեղական գործերը գաւառային և ընդհանուր խնդրոց հետ խառներ են։

Փորձառու ճշմարտութեամբ վերահասու լինելով կը վկայեմ թէ Սահմանադրութեան հաստատած քանի մը անձուկ ժողովները բաւական չեն իսկ ներկայ դրութեամբ մայրաքաղաքիս մէջ գտնուած բնիկ բնակչաց գործերը կարգադրել, թող թէ հանուր գաւառականաց։ Ստուգապէս խօսելով որ Պոլսոյ համարեա թէ հարիւր հազար Հայ բնակչաց խնդիրները, կը հաւատրին երկու միլեոն գաւառացի Հայոց խնդիրներուն, կ'թողում, չեմ յիշեր թէ ինչպէս շատ անգամ տեղական խնդիրները նախապատուութեամբ և զօրութեամբ կ'նուաճեն գաւառացւոց խնդիրները։ Այս չփոթութիւնը և ընթացքը, մեծ և ահագին զրկանքներ պատճառած է երկու մասին ևս, թէ մայրաքաղաքիս Հայոց և թէ գաւառականաց, և զարմանալին այն է որ այս զրկանաց վրայ երկու մասն ևս անտարբեր մնալով չեն խելամտիր և գոնէ իրարու բողոքներ բառնալ։

Ուստի այս խնդրոյն վերաբերեալ յարակից պատճառները որ շատ են, զայն յատենի ժողովոյդ բերանացի բացատրելով, ներկայ խնդրոյս համար զայն յատենի ժողովոյդ բերանացի բացատրելով, ներկայ խնդրոյս համար այս եզրակացութիւն կը հանեմք, կամ պէտք է տեղական և գաւառական խնդիրները իսպառ իրարմէ անջատել և Պոլիս իբրև կեդրոնական գաւառ մի նկատելով՝ սահմանադրութեան տրամադրած ժողովները հաստատել նախագահ պաշտօնէի մը տակ, բուն տեղական գործոց և խնդրոց համար, և կամ նոր պաշտօնէութիւն մի հաստատել, որ շաբաթ մինչև ցգլուխ շարունակ նիստեր ընելով, ամեն օրեայ խնդիրները լիազօր իշխանութեամբ լուծէ, բայց դարձեալ ազգին կենսական և ընդհանուր խնդրոց համար առանձին ժողով մի պէտք է, որ գոնէ շաբաթը միանգամ իւր նիստերը շարունակելով ազգային յառաջդիմութեան ճանապարհները հորդէ ու բանայ, որ շատ և ահագին խոչընդոտներ ունի։

Ահա, այս է այժմ մեր ամենակարևոր խնդիրը, զոր այսօր ժողովոյդ ուշադրութեան կը յանձնեմ, և այնչափ վերահաս ծանրացած և անհրաժեշտ խնդիր մի է ազգին համար, զոր պէտք է ժամ մի յառաջ լուծել, զի ազգին շահն այս կը պահանջէ, եթէ տակաւին ազգային վարչական ժողովոց այս ընթացքը շարունակուի, ոչինչ յոյս չը կայ Սահմանադրութենէն, և հետևապէս մեր յուսացած յառաջդիմութիւնը ձեռք չը բերուիր, և տակաւին հեռի կը մնայ Հայոց ժողովրդէն, ոչ գաւառային իւր մեծամեծ խնդրոց լուծումն պիտի տեսնայ և ոչ մայրաքաղաքային իւր առուան և տեղւոյն պահանջած յառաջդիմութեան նորանոր արգասիք պիտի կարենայ ցոյց տալ։

Աշխարհի առաջ թէ ինքն Եւրոպիոյ ազգաց դրացի է և իւր պարտիքն է քան զամեն գաւառաց յառաջդիմութեան օրինակ հանդիսանալ, որչափ ցաւալի է թաղ. կռիւներով զբաղիլ, այդ չնչին խնդիրներով միշտ Պատրիարքարանի ժողովները ճնշել, ոչ ժամ, ոչ ժամանակ թողուլ գաւառական խնդրոց։

Այս ապարդիւն ընթացքը զրկանք է և ոչ պարծանք մայրաքաղաքացի ազգայնոց, զի ինքն է նախածնող մայր Ազգ. սահմանադրութեան, իւր պարտիքն է գաւառացւոց համար անխնայ զոհել դրամ և ժամանակ. վասն զի համայն Թուրքիոյ գաւառացի հայերէն իրենք են միայն ուսմամբ և հարստութեամբ ձեռնհաս և ազատ այն ամեն հարստահարութեանց ազդեցներէն, զորս կը կրեն անճարակ ու խեղճ գաւառացիք լոյս, բարեկարգութիւն, յառաջդիմութիւն, և ազատութիւն միշտ Պոլսոյ կեդրոնէն սպասելով։

Շատ սպասեցին, աչքերնին հալեցաւ, յուսահատութիւնը մատաղուտ է, պէտք է ուշադրութիւն տալ գաւառական խնդրոյ, և սորա միայնակ միջոցն է գործոց ու խնդրոց բաշխումն և վարչական մեքենային ամենօրեայ շարժումն։

Ազգիս յառաջդիմութեան
ցանկացող

11 յուլիս 1873
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

(Մնացեալը վաղը)

ՏԱԽԻԼԻՔԷ

Տիւն սաաթ 4 բառաէլէրինտէ, իրան շահը հազրէթլէրինին ռիւքիւալէրինէ թախսիս պուլրուլմուշ օլան Բէրթէվի Բիալէ նամ վաբորը հիւմաեուն Պէյլերպէյի սարաեը հիւմաեունը բիշկեահնտա լէնկէրէնտաշ օլմուշ վէ անիտէ Զաթը հազրէթի Բատիշահիլէրի, շահը միւշարիւէյհ հազրէթլէրինին պուլունտուգլարը վաբորը թէշրիֆ պուեուրուպ, պիր ազ արամտան սոնրա, պիրլիքտէ սալթանաթ ֆիլիգասընա բաղիպէն, սարաեը մէզբիւրիւ թէշրիֆ պուեուրմուշլար վէ պատէհու, Զաթը հազրէթի Բատիշահիլէրի, Տօլմապաղչէ սարաեը հիւմաեունունա ավտէթ պուեուրմուշլար, վէ արասը չոգ սիւրմէյիպ, շահը միւշարիւէյհ հազրէթլէրի, Տօլմա պաղչէ սարաեը հիւմաեունա կէլիպ, Զաթը հազրէթի Բատիշահիեէ գարշըլըգ վիզիթա վիրտիքտէն սոնրա Պէյլերպէյի սարաեընա ավտէթ պուեուրմուշլար տը։

—Տիւն կիճէ, իրան սէֆարէթխանէսի գանտիլլէր իլէ տանաթլըլըգը կիպի, վալիտէ իսանը իլէ եբլուզ խանը էանիւնտէ ինչա օլունան ֆիւթուհաթ քէմէրլէրի պիր թագըմ չալ վէ այնալար վէ գանտիլլէ լէ թէշեին գը-

լընարագ վէ չալկալար չալընարագ իզ-հարը մէսէրրէթ օլունմուշ վէ մէգքիւր մահէլլէրի սէյր ու թէմաշա իյլէմէք իչին բէք չօգ քիմէսնէլէր կէլիպ կիթ-միշ տիր։

—Մօտա պուրնունտա իճրա օլու-նանագ գաբէրգ եարբչը, ալաֆրանկա օգոստոսուն 27ինճի չարշէնպիհ կիւ-նիւնէ գարար վիրիլմիշ տիր։ Գաբէրգ եարբչէրն խիթամբնտա իճրա օլու-նանագ պալ ի չին, 450 լիրա մէսարիֆ օլունանաղընտան, եարբչ Գոմիթէսի թարաֆընտան չիմտիքի հալտէ, 350 ատէտ լիրաես եագբն ագճէ թօփլա-նըլմբչ տբր։

—100 պէն ատէտ Մարթինի—Հէն-րի թիւֆէնկի սբփարբչ իյլէմէլէրի, Զաթբ հազրէթի բատիշահի թարա-ֆընտան Սէրասքէր բաշա հազրէթլէ-րինէ էմր օլունմուշ տուր։

—Տիւնքի բաղար իրթէսի կիւնիւ, Ավսթրիա իմբէրաթօրու հազրէթլէրի-նին իսիմլերի եէվմի մախսուսու օլմագ հասէպիյլէ, խարիճիյէ նազբրբ բաշա հազրէթլէրի իլէ թէչրիֆաթի սարայը հիւմաեուն Ալի պէյ էֆէնտի հազրէթ-լերի, սաաթ ալթը պուչուգ բատէ-լերինտէ, Պէյ օղլունտա քեային Ա-վբսթրիա սէֆարէթխանէսինէ կիտէ-րէք թէպրիք ըէսմինի իճրա իյլէմիշլէր տիր։

Քէզալիք տիւնքի կիւն, Տէրի սաա-տէթտէ մուգիմ տիւէլի մուազզամ էլչիլէրի, Ավսթրիա սէֆարէթխանէսի-նէ կիտէրէք, ըէսմի վիզիթա իճրա իթմիշլէր տիր։

—Լէվընթ թայմս զազէթասբ, պիր ինկիլիզ վաբօր գումբանեասընբն Տէ-րիսատէթտէ պուլունան ճէնթօսու ալէյհինտէ պիր մէքթուպ տէրճ իյլէ-միշ օլտուղունտան, ճէնթօ թարա-ֆընտան, ինկիլթէրա գօնսօլոսխանէ-սինտէ յատաեա գբեամ օլունուպ, 200 լիրա զարար զիեան թալապ օլուն-մուշ իւէ տէ, կէչէն ճումա իրթէսի կիւնիւ ժիւրի հուզուրունտա իճրա օ-լունան մուհաքէմէտէ, մէգքիւր ղա-զէթանընբն սահիպի մէսուլու, 40 շիլին, եանի իքի ինկիլիզ լիրասբ զարար վէ զիեան վիրմէսինէ հիւքմ օլունմուշ տուր։

———

ԻԼԱՆ

Հէմշէհրիմիզտէն տօքթօր Ստեֆան էֆէնտի Դաւիթեան Իսթանպօլա կէլ-միշ օլուպ, վէ կէտիք Բաշատա քիլի-սէնին արգասընտա պիր խանէտէ իգա-մէթ իթմէքտէ օլտուղունտան, վէ չար-շէմպիհ կիւնլէրի սաաթ իքիտէն սէ-քիզէ գատար խայրաթ պագբպ, վէ սայիր կիւնլէր իսէ, կէրէք օրատա վէ կէրէք վալիտէ խանը սբրասընտա վա-գբ միւսիւ Տօթիրիատիսին էճզախանէ-սինտէ պուլունաճաղընտան, հէր քէ-սին մալիւմիւ օլմագ իւզրէ իլան իտէ-րիզ։

Էֆէնտիի միւմաիլէյհ, քէնտի սա-նաթընտա իպրազբ էհլիեէթ իլէ, քէն-տույէ միւրաճաաթ իտէնլէրի մէճմուն իթմէքլիեէ հազբը պուլունմագտատբր։

———

ԻԼԱՆԸ ՐԷՍՄԻ

Պէօյիւք չարչը իլէ խանլար աէրու-նինտէ վէ սայիր չարշբլարտա պազբ գատընլար էշեա ալմագ վէսիլէսի իլէ, տիւքքեան վէ օտալարա կիրէրէք, օ-թուրմագտա օլտուգլարընա վէ պու եիւզտէն պիր թագբմ ֆէնալբգլար ղուհուր իթմէքտէ պուլունտուղունա պինաէն, տիւքքեանլարտա վէ խան օ-տալարընտա գատընլարբն իգամէթի մուգատատէմա մէն վէ սուրէթի մէմ-նուիյէթ իլան իտիլմիշ վէ օ մագուլէ-լերին իգամէթինէ միւսայիտ օլան էս-նաֆ, հիւքմի գանունա թաթպիգէն թէէտիպ գբլընմագտա պուլունմուշ իսէ տէ, պիր թագբմ գատընլար եինէ տիւքքեան վէ օտալարտա օթուրմագ-տան կէրի տուրմատբգլարբ կիպի, սէ-յիր եէրլէրինտէ վէ ճէմիյէթլի մահէլ-լերտէ աշբգ-սաշբգ կէզմէքտէ պու-լունտուգլարընտան, վէ պու հալլէր շէրան վէ նիզամէն ճայիզ օլմատբգտան պաշգա, հէմ տայիրէյի ագլ ու էտէպ խարիճինէ չբգաճագ տէրէճէեէ վար-մագտա, վէ հէմտէ ալէատէվամ ֆէ-նալբգլար վուգուինէ սէպէպ օլմագտա պուլունտուղունտան, չարշբլարտա տիւքքեան վէ օտալար իչինէ կիրէրէք վէ եոխատ տիւքքեան էօնլէրինէ խա-քէմվէ ատթարագ օթուրան վէ սէյիր եէրլէրինտէ վէ էօթէտէ պէրուտէ է-տէպէ մուղայիր եօլատա կէզէն գատընլար հագգընտա տախի միւճաղաթը լազբմէ իճրա օլունաճագ տբր, պու սուրէթ հէր քէսին մալիւմի օլմագ վէ օնա կէսրէ հարէքէթ իտիլմէք իւզրէ իլանը քէյֆիյէթէ իպթիտար գբ-լընտը։

———

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԼԷՐ

ԱՎՍԹՐԻԱ-ՄԱՃԱՐ

Վիէննա 18 օգոստ.

Պօրսա տիւն գաբալը իտի, էվվելի-սի կիւն գաբանարգտա քեաղբտար տիւշտիւ։

Տիւն, 67 քիչի գօլէրատան թու-թուլտու։

ԻՍԲԱՆԵԱ

Մատրիտ 18 օգոստ.

Գարլիսթ էշգբեասբ, Պալատէմիտէ մաղլուպ օլուպ, Պէրկա էօնիւնտէ մէվ-գբլարընը թէրք իթտիլէր. Գարթա-ժէնին ասբլարբ, մահպուսխանէյի տ-չբպ, 1500 մահպուսա սիլահ վիրտի-լէր։

ՎԻԷՆՆԱ ԷՔՍԲՕՋԻՍԻՕՆՈՒ

Վիէննա 18 օգոստ.

Պու կիւն էօյլէտէ, էքսբօզիսօնա էշե վաղ իթմիշ օլանլարտա, միւքեա-ֆաթ թէվզի օլունտու։

Էշեա վաղ իթմիշ օլան Օսմանլբլար իլէ հիւքիւմէթի սէնիեէ վէ Իսթան-պօլուն մէքթէպի թբպպիեէսինէ տիբ-լօմա իթա օլունտու։

———

ԹԻԻՃԱՐԻՑԻ

Լիվերբուլ 16 օգոստոս

Միուլինկ Նիու Օրլէանս բամուզու, բէնա 9 1/8
Ցօլարա էյի ճինս 6
Պու կիւնքի սաթբ 10,000 պալէտ
Բիացա գավի

Լոնտրա 16 օգոստոս

Աֆիոն 24 00
Թիֆթիգ 34 36
Զաթ իբէյի, 24
Ճէհրի. 6, 5 7

———

ՍԱՐՐԱՖԻՑԻ

Լոնտրա 18 օգոստոս

Էսհամը Ումումի աշբլտը 30 5/8
» » գաբանտը 51 1/4
1865 իսթիգրազը 1 68 5/8
1869 իսթիգրազը 61 1/4
Ինկիլիզ ֆոնտոսու 92 13/16
Մբսբր իսթիգրազը 3/8 պաշ իտիեար
Պօրսա չօգ գավի գաբանտը
Օսմանլը ֆոնտօլարը արանմագտա տբր։

Բարիս, 18 օգոստոս

Էսհամը ումումի աշբլտը 32 05
» » գաբանտը 32 22
1865 իսթիգրազը 356 25
1869 իսթիգրազը 322 30
Բումէլի տէմիր եօլ սէհիմլէրի 154
» » » » եէնի 140
Իթալեա ֆոնտոսու 61 55
Ֆրանսբզ ֆոնտոսու 3 0/0 գաբ 57 70–57 85
» » 5 0/0 91 75–91 67
Մբսբր իսթիգրազը 490 1/2
Պօրսա չօգլուգ իշթիհարտա տէյիլ։

———

ԳԱԼԱԹԱ ԲԻՌԶԱՍԸ

Էսհ. Ումումի Օգոստոս 6 ախշամ գաբ. 57-25
» » » 7 սապահ աշբլտը 57-28
Էն եիւքսէք 57-38
Էն աշաղը 57-25
» » սաաթ 6 57-37
Իսթիգրազ 1865 351-
» 1868 358-
» 1869 323-
» 1872 Ա Բ Գ
Գրէտի ժէնէրալ 15-26
Սօսիէթէ ժէնէրալ ագսիօնլարը 11 09
Սօսիէթէ Օթման 6-95
Ստամպօլ պանգասը ագսիօնլարը 7-37
Պանգ տը Գոմէրսիալ 4-70
» Պալթահի
» Վէրիսի 4-5
» Սօսիէթէ Օսթրօ Թիւրք 4 30
Շըմէնտըֆէր սէհիմլէրի էսկի 152
» » եէնի 65
Թրամվայ հիսսէլէրի 1515
Գրէտի Հէլէնիկ 25
Լօրիում մատէնի ագսիօնլարը 78 ֆրանք
Գուբօն սքօնթօսու 34 բարա
Ագճէ ֆայիզի 11 1/2-12
Ռէբօր 00
Հէվալէսիզ

ԱԳՃԷԼԷՐԻՆ ԲԻՌԶԱՍԸ 7 ՕԳՈՍՏՈՍ

Ինկիլիզ լիրասը 109-35
Ֆրանսբզ ալթունու 87-17
Բօլ 89-15
Գբրմանիա ալթունու 51-23
Գէնաբ մէճիտիյէ ֆարգը 101-35
Մէթալիք ֆարգը 104-10
Գագբր 120-25
Պէչիկ 104- 0

———

(Ն Է Վ Ի Ճ Է)

Միւճթէմէայի Ամէրիգա չբմէնտբ-ֆէրլէրի, կէչէն սէնէլէր զարֆընտա զիեատէսիյէ չօղալմբչ տբր։ 1830 սէնէսինտէ, եանի 43 սէնէ էվվէլ, մէ-մալիքի Միւճթէմէատա 23 պին միլ չբ-մէնտբֆէր պուլունուպ, 1861 սէնէսինէ գատաբ 31,286 միլէ իպլաղ օլունմուշ օլտուղու հալտէ, 1872 սէնէսինին նի-հայէթինտէ, 67 104 միլ չբմէնտբֆէր մէվճուտ պուլունմուշ վէ պու սէնէ տախի 6427 միլ չբմէնտբֆէր ինչա իտ-տիլմիշ տիր։

Ամէրիգա չբմէնտբֆէրլէրինէ սարֆ օլունան մէպալիղ, 3 միլեար 139 միլեօն տօլար գատաբ օլուպ, հէր պիր միլ ի-չին 55,060 տօլարա գատաբ մասրաֆ օլմուշ տուր։

1872 սէնէսինտէ չբմէնտբֆէրլէրին հասբլաթբ, 473 միլեօն տօլար օլուպ, պունուն եիւզտէ եէրմի սէքիզի եօլճուլարտան վէ եիւզտէ եէթմիշ իքիսի, թիւճճար մալլէրինտէն ալընմբչ տբր։ Հէր պիր չբմէնտբֆէրտէն օրթա հի-սապա 8256 տօլար հասբլաթ օլմուշ տուր։

—Ֆրանսա էրքեանը հարպ զապի-թանը, Բարիս իսթիհքեամաթընընն եէ-նիտէն ինչասբ իչին իճապ իտէն խա-րիթալարը թանզիմ իյլէմիշլէր տիր։

Պրզանսօն վէ Լիլ վէ Վալանսին վէ սայիր պազբ շէհիրլէրտէ տախի իս-թիհքեամլար ինչա օլունաճագ տբր։ Պէլֆօրտա Ալմանլարընն ինչա իթմիշ օլ-տուգլարը մուվագգաթ իսթիհքեամ-լար եբգբլբպ եէնիտէն եաբբլաճագ տբր։

—Ֆրանսատա Պավէ չէհրինտէ պիր ամէլէ, Բոմա իմբէրաթօրլարընընն սիք-կէսիյլէ տօլու պէօյիւք պիր քիւբ ալ-թուն պուլմուշ վէ մէրգում, պու ալ-թունտան պիր մբգտարընը ալբպ սաթ-մագ իւզրէ, Պէլճիգատա կէօթիւրիւպ օրատա պիր անթիգաճբ՝տա կէօսթէր-տիյինտէ, անթիգաճբ, իշ պու անթի-գալարա հէյրան օլուպ, ֆագաթ պու ատէմին, պունլարբ չալմբչ օլմասընա շիւբհէ իտէրէք բօլիսէ խապէր վիրմիշ տիր։ Մէրգում Պէլճիգատա թէպրիէ-յի զիմմէթ իլէ մէչղուլ օլտուղու սբ-րատա, Պավէ չէհրինտէ սայիր ամէլէ-լէր, քէյֆիյէթի խապէր ալարագ, ալթունուն պուլունտուղու մահէլլի գազմբչլար վէ պունլար տախի, 10 միլեօն ֆբրանգ գբյմէթինտէ ալթուն պուլմուշլար տբր։

—Սագսօնեա գբրալբ պունատան ագ-տէմ քէյֆիզ օլուպ, պիր իքի կիւնէ կէլինճէեէ գատաբ քէյֆիզլիյի զիեա-տէլէշմէքտէ իքէն, պու կիւնլէրտէ հավալարբն ղայէթ սբճագ օլմասբ, միւշարիլէյհին տէրէճէյի նիհայեէտէ զաֆէթինի մուճիպ օլտուղունու ֆբ-րանսբզ ղաղէթալարբ եազբեար։

—Մէքսիքա ճիւմհուրու, Միւթթէ-ֆիգայի Ամէրիդա իլէ օլան հուատու-տունու մուհաֆազա իչին, Ռիպու կբ-բանտ նէհրի գբեբլարընա տօպրու 6000 քիչի սէվգ իյլէմիշ տիր։

—Մարէշալ Պազէնին Ֆիսթինթագբ զբմընտա թէչքիլ օլունան մէճլիսին թէճէմմիւ իթմէսի իչին մախսուս պիր մահէլլ թայեին իտիլմիշ վէ օրատա մա-բէշալ Պազէնէ մախսուս գաֆէս միսիլ-լու պիրտէ եէր եաբբլմբչ տբր։

—Լօնարտատա վէլիճ թարաֆլարընտա պիրի 72 եաշընտա վէ տիկերի 42 եաշընտա իքի քիչի, 20 հէնէտէն պէ-րու պիր խանէտէ սաքին օլուպ, միւտ-թէթի մէզքիւրէ էսնասընտա խանէյի մէզքիւրէ գաաբն թայիֆէսինտէն հիչ պիր ֆէրտ աեագ պասմամբչ օլտուղու հալտէ, յուլիսին 24 ինճի կիճէսի, մէրգուման ագշամ իւզրէի, խանէէ կէլիպ իչէրի կիրտիքտէն վէ արատբ եարբմ սաաթ մբգտարբ կէչտիքտէն սօնրա, նակէհան պիր գաչ քէրէ թիւ-ֆէնք սէտասբ իչիտիլմէքլէ, տէրհալ տիշարբտան խանէ գաբուսու գբրբլա-բոգ, զապբթա թարաֆընտան իչէրի կիրէն ատամ, մէրգուման իքի նէֆէր քիմէսնէլէրտէն պիրիսինին գաֆասբ պէտէնինտէն այրբլմբչ վէ գանլարա պօեանմբչ վէ տիկեր տրգատաշբ իսէ, քէնտիսինի թիւֆէնք իլէ թէլէֆ իթ-միշ օլտուղունատան, պունուն գաթիլ օլտուղու անլաշբլմբչ տբր։

—Խիվատան ալընան խապ՝ալրէրէ նէզարէն, Խիվա խանլբղընընն ահվալբ ատխիլիեէսի, հիւքիւմէթի մահէլլի-եէեէ պազբ կէօնա զալէ վիրմէքտէ տիր։

Խիվալբլար, սալբ վիրիլէն իրանլբ-լարա սարգընթբլբգ վիրիպ, էն զիեատ ճէնկեավէր պիր գապիլէտէն օլան եօմուալար, Խիվալբլարբ էօլտիւրիւպ մալլէրինի եաղմատա վիրմէքտէ տիր-լէր։

Թիւրքմէնլէր տախի Յպու հալտէն իսթիֆատէ պիրլէ, բատթ կէլտիքլէրի ատամլարընն իւզէրինէ հիւճումիթմէք-տէ տիրլէր։ Խիվա խանը, նէ եաբա-ճաղընը չաշբրբպ, մէմալիքինտէ ատա-մէշի հալին իատէսի իչին քէնտիլէրէ մուավէնէթ իյլէմէլէրի զբմընտա ժէ-նէրալ Ֆօֆմանա ռիճա իթմիշ տիր։

———

ՊԱՀԻՑ ՂԱԶԻՆ
ԿԱՐԱՊԵՏ Ե. ՓԱՆՈՍԵԱՆ

Գալաթատա Բէնճէմպիհ բազարընտա
Ն՝ 29 Իսպի խանընտա